

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից կամ անհատական մէջ:

Օտարապաշտարարի փոխում են ուղղակի:

Тифлисе. Редакция «Маск»

Խմորագրությունը լաց է առնում տեղան 10—2 ժամ

(Բացի կիրակի եւ տոն օրերից):

Հայտարարությունը ընդունվում է ամեն լիզուով:

Հայտարարությունների համար գնալով են

խրատները ըստ 2 կոպեկի:

ԲՈՂԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Մի դառն դաս: Նա մեկ խմորագրություն: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Հայոց խնդիր: Գերմանիա: Իտալիա:—ՀԵՌԱՎԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ: Թիւրքացի Հայաստան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԴԱՌՆ ԴԱՍ

Կարծես թէ նախախնամութիւնից հային տուած է այն նշանաբանը, որ երբ մի ուրիշը իր գործունէութեամբ գերազանցում է նորանից եւ կատարում է արդէն վաղուց նորա կատարելու գործերը, հայը փոխանակ գործով մրցելու առաջինի հետ,—սխալում է բողոքել, զանգաւում, գրեթէ երկնային նշան լաց լինել եւ խանդաւրել առաջինի գործունէութիւնը, ինքը դարձնալ անգործ մնալով: Այս երեւոյթը յատուկ է մանաւանդ հայ-հոգեւորականութեան:

Մշակի՞մ 113 բուշից (Պարսկաստան) գրված նամակը մի կենդանի օրինակ

ԹԻԻՐԲԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆ

Հրապարակախօսութիւն կարողացված 1881 մայիսի 29-ին եւ կրկնված յունիսի 12-ին, Թիֆլիս, Արթուրու թատրոնում:

Ա. Մ Ա Ս

Ինքնաճանաչութիւնը ինքնազոյութեան այլ ու բնին է:

Եւրոպացի բազմաթիւ գիտնական անձինք անդադար ճանապարհորդում են:

Նոքա արդէն ուսումնասիրած լինելով իրանց հայրենիքը եւ այդ նեղ շրջանում չը կարողանալով տեղեկութիւն աշխատում են ընդհանուր գիտութեան, ընդհանուր պատմութեան, ընդհանուր մարդկութեան շահերին ծառայել: Հաստատվում այդ համոզմունքին, որի տալով այն ամեն, որոնց մենք վտանգ ենք անուանում, շատ անգամ իրանց կեանքը զոհում են նպատակի ծայրին, անցնելով սառուցեալ գոտիներից եւ անապատների կիզող ւազդներից:

Ընդհանուր մարդկութեան ընտանիքին նուիրված այդ մարդկանցից շատերը, թիւրքացի Հայաստանը եւ այցելւել են այցելում են, քննելով նորա անցեալն եւ ներկայն:

Բայց ցարդ, ոչ մի տաճկաստանցի կամ ռուսաստանցի գիտնական հայ, յանձն առաւ մի հետախուզական ճանապարհորդութիւն անել այն աշխարհի մէջ, որին նա իր պատմական հայրենիքն է անուանում, նորա համար ինքնավարութիւն է երեակայում, այն ու վախ է քաշում նորա թշուառութեանց վրա եւ թերեւ արտասուում է: Ամեն մի գործ համոզմունքի արդիւնքն է: Եթէ մենք ազգային կանոնաւոր գործեր չունենք նորա համար է, որ ազգայնական ճշմարիտ համոզմունք չունենք:

Եթէ ճանկաստանի հայերը ինքնավարութիւն չունեն, նորա համար է, որ հայրենիքի համար բոլորապէս չեն արտոյլ աշխատողներ եւ մեռնողներ չունենք:

Եւրոպացի ճանապարհորդներ օրքան էլ հմուտ լինեն իրանց գործին, բայց այն ժողովրդի, ազգի մէջ, որոնք նորա լեզուն չը գիտեն, պատմութեան, աւանդութիւններին անտեղեակ են, ինչպէս խուլ եւ համր են չըլլում, ենթարկվելով մի թարգմանի հանձնարանութեան, Նոքա օգուտ են քաղում այժմեան բանուկ ճանապարհների

եւ ապացոյց է մեր ասածների, որը եղել է եւ գլխաւոր պատճառ մեր ներկայ յոգուածի գրեթէ: Ինչպէս ընթերցողներին արդէն յայտնի է նոյն նամակից, բողոքականութիւնը մեծ չափերով եւ յաջողութեամբ տարածվում է Պարսկաստանում, ոչ միայն հայ-լուսաւորչականների, այլ եւ տեղային մահմետականների եւ հրէաների մէջ: Հետաքրքիր է իմանալ, թէ Էջմիածինը եւ հայ-ազգի մղեւադ-խնայիցեալ մասը իրանց օրգաններով, ի՞նչ միջոցներ են ձեռք առնում միմեկաների գէտ մրցելու եւ նոյն ազդեցութիւնը, իրանց ազգայնիչների վրա ոչնչացնելու: Յիշոցներ, զրպարտութիւններ, հալածանք, բողոք, լաց, եւ այդ բոլոր միջոցները ոյժ չունեն: Ներկայումս ազդեցութիւն ձեռք բերելու համար հարկաւոր է գործունէութիւն, կենդանի, ժամանակայարմար գործքերով, եւ այդ շատ լաւ հասկացել են միսիօնարները, որոնք լայնածաւալ ծովեր եւ ովկիանոսներ, անանցանելի լեռներ եւ անապատներ անցնելով տարածվում են երկրագնդի ամենախորին անկիւններում, եւ իրանց կենդանի գործունէութեամբ քաղաքակրթութեւն ամենա-

աջ ու ձախ կողմերից: Բայց այդ ճանապարհներ թերեւ չը կային առաջ. թիւրքացի Հայաստանի մեջ անգամ տակն ու գլուխ կղած է, կարժամանակ, որ մարդիք իրանց կեանքի եւ կաշքի ապահովութեան համար, ընտրում էին դժուարակիւր եւ անմասնելի տեղեր, ծածկվելու համար, փորում էին գետնափշեր, քարայրներ:

Բայց այդ ժողովրդական կեանքին ծանօթանալու համար, հարկաւոր է ժամանակ, ընտանեացի մէջ մտնել, նստել նորա կրակարանի կողքին, ուսել նորա արեան քրտնքով պարտատու հաց, խօսել նորա լեզուով եւ այդ ոչ քաղաքների մէջ, մեր ասած կեանքը գիւղերի մէջն է:

Տարակոյս չը կայ որ հայ ճանապարհորդը աւելի կարող է տեսնել, լսել, իմաստասիրել, լիակատար կերպով հասնել իր նպատակին, քան եւրոպացի ճանապարհորդներ բոլորը միասին: Բայց ինչպէս յիշեցի, ոչ Վ. Պոլսի հայոց սահմանադրական կառավարութիւնը, որ մի մարմին է, ոչ էլ Ռուսաստանի երկրապարտութիւնը, որ աւելի բարձր զարգացած է, դեռ այդպիսի մի արշաւանքի համար ոչինչ չեն մտածել:

Անցեալում, ճշմարիտ է, որ Վենետիկի միաբանութեան մի քանի վարդապետներ չըլլել են Հայաստանի վանքեր, բայց բոլորովին այլ նպատակով. նոքա հայ հին մատենագրութեան բեկորներ հաւաքել են, հայ բարերարների ծայրքով տպագրել եւ թանգ քննելով հայերի վրա ծախել են: Գործնով եւ չեն ուրանում այն օգուտը, որ նրանք հայ ձեռագիրները աղատել են փոշուց եւ չեն օգտուել:

Վհայնու համար հայ գրագէտ կամ հրապարակախօսը, երբ պէտք է զգուծ թիւրքացի Հայաստանի վրա մի քանի տող գրել, մի քանի խօսք խօսել, որովհետեւ նա չէ ճանաչում իր բնագաւառը, դիմում է այն ինչ անգլիացի, գերմանացի կամ ֆրանսիացի ճանապարհորդներին եւ նորա ասութեան վրա է հիմնում իր գրոյցի կամ ճառի շինութիւնը:

Ինչ անուան արժանի կը լինէր մի եւրոպացի, ազգ, ի՞նչ նա մեզ, հայերիս հայացքով ճանաչէր իրան:

Այո, արեւոյթ եւ պարոններ, մենք օտարների աչքով ենք ճանաչում մեր տաճկական հայրենիքը:

Մի ցաւալի ճշմարտութիւն է ասել որ օտարազգիների մէջ աւելի բազմաթիւ անձինք կարելի է գտնել, որոնք թիւրքացի Հայաստանը մեզանից

վայրենի ազգերին... Դրանց դէմ մրցել պէտք է նրանց զէնքերով:

Իսկ նրանց գործունէութիւնը կատարվում է այն ձեւով, այն եղանակով, ինչպէս յարմար է ժամանակին, ինչպիսի պահանջն էր գրում է ժողովուրդը:

Էջմիածինը եւ միւրեւանդ-խնայիցեալները զատապարտում են միսիօնարների գործուհեութիւնը եւ ժողովրդի կրօնափոխութիւնը (թէ եւ բողոքական ուղադրութիւն էլ չեն դարձնում), բայց երբ Պարսկաստանի եւ Հնդկաստանի հայերը բողոքում են իրանց առաջնորդի գէտ եւ խնդրում են Էջմիածինից անօրինութիւն,—ոչ ոք ուղադրութիւն չէ դարձնում եւ ոչ էլ պատասխանի արժանացնում... Ոչ ոք ուղադրութիւն չէ դարձնում, երբ Ուտիացիները եւ Ուփլիցիները բողոքում են իրանց քահանայների գէտ: Ոչ ոք ուղադրութիւն չէ դարձնում երբ Էջմիածին կանցելը Մանիսիւնիս եւ նուրա լիազոր գեւական Թիֆլիսում—Մամրէն, իրանց կամայական եւ անկարգ գործունէութեամբ զոգաւնում են հասարակութեանը...

Միջոցաւ Էջմիածինը իր տասն եւ չորս ամեայ գործունէութեան մէջ հազիւ հազ

աւելի լաւ ծանաչել, աւելի բազմաթիւ անձինք, որ նորան առաւել համակրէին, աւելի մարդիք, որ մեզ համար մեղանից առաւել աշխատէին:

Անցեալ տարվայ սովին անգլիացիք իրանց ղեկավարները եւ միսիօնարների ձեռքով կրկնապատկ մեծ օգնութիւն հասցրին հայերին, քան աշխարհում գտնված բոլոր հայերը, որոնց մէջ կային եւ այնպիսիք, որոնք իրանց տուած կուպէի համար, պահանջում էին որ ինչպէս բարեւար փառաբանվէին: Հասցրել կասեն, որ անգլիացիք նպատակի համար էին անում, որ ազդեցութիւն ունենան այդ աշխարհի վրա, բայց հարկաւոր չէր, որ այդ ազդեցութիւնը ազգն ինքն ունենար իր անդամների վրա:

Երբ 1877—1878 զրդեւում էին Մասիսի կողերը, երբ բաժնեւորներ էր պատրուում մի անտէր հողի կտոր, ազգն այն միջոցին սաստիկ անձկութեան մէջ էր գտնվում: Բոլոր այդ իրարանցումներ, տաքնապններ, աշխատանքներ իզուր գնացին, որովհետեւ նախապատրաստութիւն չը կար: Եւ երբ ամեն բան հանդարտուեց, ազգն էլ կարծես ամեն բանի հետ պրծաւ իր պարտքից, եւ հանդարտուեց, նման ութասուն տարեկան այն վանքի ծերունոյն, որ ամեն բան Աստուծոց է ոպասում: Հարկն կործանում, իրան հարստութիւն, կեանք եւ արքայութիւն, քիչ է մնում Աստուծոց խնդրի որ իր թոշնին էլ վառի: Սրբա պէս էլ մենք ամեն հրաշագործութիւններ 61-երորդ թւանշանից ենք սպասում: Կը զայ ժամանակ, կրկին կորուսան չարագուշակ թնդանօղներ: Թերեւ այն ժամանակ միայն կարծիքնան քնած եւ թմբած սրբաւորը, բայց այդ կը լինի շատ ուշ...

Թիֆլիս ռուսական հայոց սիրան է: Այդտեղ կեդրոնացած են նոյն բարոյական եւ նիւթական բարձր ոյժերը, որի նման ազգը ոչ մի տեղ չունի: Այստեղ են գիտութեան բարձրագոյն գոյնից դուրս եկած բազմաթիւ երիտասարդներ, որոնք թիւրքաբազմաբար տարից տարի աւելանում է: Բայց զարմանալին այն է, որ թողած մի քանի բացառութիւններ, այդ կրթված դասակարգը, առեւտրականից ոչ մի բանով չէ տարբերվում: Մի եւ նոյն եզակի շահեր, մի եւ նոյն աստուածացի անձնասիրութիւններ, որոնք ընդհանուր շահերի, գործերի հետ երբէք չեն հաշտվել: Կարծես թէ դոքա վաճառականական հաշուով են մտել

կարողացաւ մի ձեւարան հիմնել, միսիօնարները Հայաստանի նշանաւոր բոլոր տեղերում հիմնել են ուսումնարաններ, յիշենք միայն Խարբերդի բարձրագոյն դպրոցը (Օռնէգ), որը ոչ թէ Էջմիածնի ձեւարանից, այլ եւ Թիֆլիզի գիմնազիանից եւ գերազանցում է... Նոյնպէս Սպահանի (Պարսկաստանում) եւ այլ տեղերի, որոնց մէջ առանց որ եւ է խտրութեան դաստիարակվում են ազգաբնակչութեան հարկաւոր գաւառներ կրկու սեւից եւս: Այլ եւ չենք խօսում այն բազմաթիւ ուսումնարանների եւ այլ հիմնարկութիւնների վրա, որոնք սփռված են նոյն միսիօնարների ձեռքով աշխարհիս մինչեւ ամենայնայնայն խորքերում, եւ այն կենդանի եւ հասկանալի աշխարհաբան լեզուներով գրված սուրբ եւ բարոյական գրքերի մասին, որոնց Բրիտանական Աստուածաշնչի ընկերութիւնը նոյն միսիօնարների ձեռքով մատակարարում է ժողովրդին ամենաարժան գնով եւ շատ անգամ բոլորովին ձրի...

Վերջապէս միսիօնարները իրանց նշանաւոր ընտրել են—գործունէութիւն, առաջադիմութիւն, միաբանութիւն... Գուցէ

գիտութեան տաճար եւ մի եւ նոյն հաշուով այնտեղից դուրս են եկել: Կարծես թէ դոքա մի ազգի անգամներ չեն, մի—սիրտը եւ գործունէութեան յենակէտ չունեն, որ նրան զօհէին բոլոր մասնաւոր շահեր եւ անձնասիրութիւն, մի համերաշխ միութեան եւ գործունէութեան համար: Կարծես թէ դոքա, մի սկզբունքի տէր չեն, այլ ամեն մէկը իր ունի առանձին:

Այդպիսով մեր գիտնական բարձր դասակարգը մնում է անգործ, անխարդ, թիւրքացի Հայաստանի այժմեան հանդիսաւոր ճգնաժամի դէմ:

Մի քանի խօսք էլ տաճկահայաստանցի համար, որոնց ինտելիգենցիան Վ. Պոլսին է կարծվում, կամ լաւ եւ ասել պոսեցիք, որոնց վրա ենք թողել բոլորովին հայկական խնդրի ծանրութիւնը: Դոքա աշխոյժ, ազնիւ գգայանացի տէր, գեղեցիկ նախադասութիւններ գրող եւ արտասանող եւ ի վերա այս ամենայնի, ցաւալ է ասել, որ երեակայական աշխարհի մէջ ապրող մարդիկ են, զբաղված միշտ պատրիարքարանի եւ երեսփոխանական ժողովի խնդիրներով:

Նոքա տարին միանգամ մայիսի 1-ին կենտրոնանում են Բօսֆօրի ափական ափի վրա, կատարում են մեծածախու տոն, կարողում են անթիւ ճառեր, յիշում են բոլոր աշխարհի հանձնարար անձանց, հայրենասէրների անուններ եւ ամենը նորա համար, որ նրանք իրանց սահմանադրաւ եւ բարեկարգեալ Հայաստանի մէջն են երեակայում: Բայց այն կողմ, որի համար լինում են այդ ծայրահեղ ուրախութիւններ, դառնութեան արտասուք են քամում մի արեւնաշաղախ մակերևոյթի վրա:

Նոքա իրար անուանում են մեծ, հանձնար, բայց ձր մեծագործութեանց, որ գիտնական արտագրութեանց համար, յայտնի չէ իրականի մէջ, չը նայած որ այնպիսի մի ազգային վիճակ ունենք, որ շատ մեծագործների պէտք ունի:

Գրաբաւ եւ աշխարհաբան լեզուի խիղախող հերոսները, այդ աւելորդ եւ արդէն լուծված խնդրի համար, Ուլիպոսի բոլոր աստուածներ եւ աստուածուհիք «Մասիս» ցրդրի մէջ ցրին, երեի ցրց տալու համար իրանց հանձնարը եւ չողուն նախադասութիւնները: Բայց Սղերտը, որ մօտ 5—6000 քնակիչ ունի, այնտեղ հայերէն մի բառ չը գիտեն, նոքա խօսում են արաբերէն, քրդերէն եւ երեք տարի է, որ առաջնորդ չունեն:

նրանց ուղղութիւնը վատ է, փնտսակար է, ազգակործան է,—աշխատեցէք նրանց հետ միջեւ, նոյնն անել ինչ որ նրանք են անում, նոյն եռանդոտ գործունէութիւնը կատարել, աւելի լաւ, աւելի ազգասէր ուղղութեամբ...

Բայց ի՞նչ կը նշանակէ ուրիշի եռանդոտ գործունէութիւնը գտնել փնտսակար, ազգափնտս,—ե մի և նոյն ժամանակ միայն աղաղակել, գանգաւորել, հայհոյել, լաց լինել և ոչինչ չանել:

Եթէ միտնարները մեր ազգի և եկեղեցու թշնամիներ էք համարում, գործեցէք ինչպէս նրանք են գործում, միջեք նրանց հետ, ոչնչացրէք նրանց ուղղութիւնը, ներանց գործունէութիւնը ձեր ուղղութեամբ, ձեր գործունէութեամբ:

Փառք Աստուծու մէնք ունենք ահազին կողմ, ունենք Եղմիածին, ունենք վանքի մէջ ազգային ահազին նիւթական միջոցներ,—մենք էլ կարող էինք բողոքական միտնարների հետ միջեկու համար հիմնել մի հայ-լուսաւորչական զօրեղ միտնարական ընկերութիւն: Իսկ ոչինչ չանել, բայց մի և նոյն ժամանակ հայհոյել, աղաղակել և բողոքել,—դա թուրութեան և անընդունակութեան նշան է, աւելի ոչինչ:

Բ.

ՆԱՄԱԿ ԽՐԱՎԱԳՐԻՆ

Թիֆլիս, 29 յունիսի

Այսօր կարդացի «Մշակի» 116 համարը, ուր հրատարակված է Մոսկովայից ուղարկված Ն. Տ. Գ.-ի նամակը՝ իմ յօդուածիս առիթով: Աւելորդ եմ համարում մանրամասն քննելու այդ նամակը, որ լի է ամենայն տեսակ հակասութիւններով և

Այն էլ ուղում ասել, որ այդ մեծ մարդիկ այդ հանձնարները իրանք իրանց չեն ճանաչում, և այն անձը, որ ինքն իրան չէ ճանաչում, նա իր հայրենիքը չէ կարող ճանաչել:

Երևանից Թիֆլիս գալիս մի պատահական անցք ինձ վրա մեծ տպաւորութիւն արեց: Առաջին կայարանում մենք հասանք մի կառքի և նրա հետ Գեղամայ ծովի եզերքներն անցանք: Մի կայարանում, որի ծառան մի հայ պատանի էր, միջ առաջարկեց տաքացրած կաթ խմել, քանորդ ժամից զինի պատանին վերադարձաւ դէպ ինձ, մի դարձարուն կազմած գիրքը ձեռքին, հարցնելով, թէ դա ֆարմատօնի գիրք է՞ր իս: Կս տեսայ մի փոքրաւոր աշխարհաբառ աւետարան և նրան վստահացրի, որ կարող էր կարդալ. անհկարագրելի էր պատանու ուրախութիւնը. տալովս չը կար, որ ամառվին անգամն էր նորան աշխարհի մի ընծայ ստանալ: Ո՛րք էին ընծայողները, երկու տարազգի միտնար կանայք... որոնք Ուրմից Թիֆլիս էին գնում. ես դուրս առաջ իմ ոչնչութիւնն էի դրում, և միթէ կարելի չէր, մտածում էի, մի քանի գրքեր վեր առնել գիւղերում բաժանելու համար, և ով կը խնայէր երբ ես նրանց իմ նպատակը յայտնէի:

Գրքերը հասարակ դասակարգի մէջ այժմ կարդացվում են, մանուկանդ ազգային վերաբերւնքներ: Ես տեսայ երեւում արհեստագործների մի խումբ հաւաքված, որոնք Գաւիթ բէկ էին կարդում. բայց այդ բառական չէր, նորա լաց էին լինում, երեսուն էր, որ այդ ընտիր վիպասանութեան սրտաշարժ տեղերից մէկին էին պատահել:

Բայց ես իրքան հայ գիւղերից անցկացայ, ինչ սրտալի բնորոշութիւնների պատահելի: Եւ եթէ ամեն մի գիւղում մի ազգային վիպասանութիւն թողած լինէի, սերմնացանի նման մի մեծ ծառայութիւն արած կը լինէի: Ամեն տեղ չըջապատում էին և հազար ու մի հարցումներ տալիս, բոլորը ազգի վրա, բոլորը ազգի համար, որիսով «ինչ է մտածում ազգը մեզի համար, ինչ է նրա կտորը, ինչ հրամայում է մեզ անել, մենք դիտենք որ այժմ մի պաշտպան ազգ ունենք և նորան ենք պարտական մեր կեանքը և այդ կեանքը մենք պատրաստ ենք ամեն բոլոր նորան գոհելու:» Առաջին անգամ ճանապարհորդը չփոթվում է. նա տեսնում է պարզ, որ այդ ազգին հոգիք այնքան մեծ համարմունք ունեն ազ-

գարակ ֆրաղներով, բայց ոչինչ մի արժանաւոր և ծանրակշիռ փաստով իմ յօդուածի վերաբերմամբ: Ն. Տ. Գ.-ի նամակի գլխաւոր միտքը և նրա մանր ու չնչին շարժառիթները պարզելու համար՝ բառական է միայն մի քանի ծաղկաբաղ անել. դրանից ընթերցողը կը տեսնի՝ Ն. Տ. Գ.-ի չափազանց կանխակալ կարծիքները ունենալը—մի տեսակ անհիմն մարդարեւութիւն, որ միշտ արգելք է լինում մարդուս առողջ դատելու և սահունութեամբ քննելու այս կամ այն իրողութիւնը: Ն. Տ. Գ.-ի ինքնագովութիւնը, որ մի պարտաւելի երեսյթ է տեսնել լրագրութեան մէջ և այն դատապարտելի բուրժուանք, որ դեռ պահում է Ն. Տ. Գ. իմ նամակում յիշած ճիշդութիւն տիրացունքի մասին, որոնք իրանց անձնական հաշիւների մէջ խառնում են անփորձ երիտասարդներ և սրանց անուշով (բայց իրանց գրչով ու թանաքով) հրապարակ դուրս գալիս:

Ն. Տ. Գ. իր նամակի առաջին տողերը ըսկում է այսպէս. «Ես «Մշակի» 67 համարում նամակ գրելիս՝ հաստատաբէս համոզված էի, որ Գ. թ. անպատճառ պաշտպան կը հանդիսանայ սխալմունքներ և անպարտաւելի (?) գործը երկու ինչ անարդար ու ձորեր թափանցող հեռատեսութիւն: Այսպիսի մի կանխակալ կարծիք յայտնի բան է հարկ չը կայ քննելու. նրա դարձակութիւնը ակնհայտ է: Ուրեմն նոյնպիսի մի ֆրաղ կարելի է ասել և Ն. Տ. Գ.-ի վերաբերութեամբ. ես իմ նամակ գրելիս՝ հաստատաբէս համոզված էի, որ Ն. Տ. Գ. անպատճառ պաշտպան կը հանդիսանայ սխալմունքներ և ապօրինի գործերի: Բայց ինչ դուրս եկաւ սրանից. միթէ սա բարեխիղճ քննադատութիւն է, միթէ սա այն բաղձալի վրիթիկան է, որի վրա ակնարկում է Ն. Տ. Գ. իր նամակի մէջ:

Մեր լրագրութեան մէջ պատահում է, որ այս կամ այն յօդուածի առթիւ՝ տպվում են ուրիշ անձների կողմից (թէն շատ անգամ անարժան) գովասանութիւններ: Բայց որ ինքը՝ նամակի հեղինակը՝ գովասանութիւններ չարէ իր երկրորդ նամակի մէջ իր առաջին և միակ նամակ գիրքը, որ նորան երեւակայում են մի հզօր և կատարելապէս կազմակերպված մի մարմին, դիտնական, հարուստ, անձնազօր անդամներից բաղկացած: Չը հաստատեւ նոցա համարմունքը, չը տալ ազգին այն կատարելապէս, որ նա չուներ, դա նշանակում է սպանել նրանց սրտի նորաբողոք կենդանութեան յոյսը, խախտել այդ յաւերժական գիւղացոց հաստատութիւնը, որ տառն և չորս դարերի քարադատական ժամանակամիջոցը ոչինչ չէ կարողացել առնել:

Շատ ժամանակ չէ որ մեր գիւղացիները ազգային մտքերով ոգնորվել են, սիրտ առել, և սկսել են պաշտպանել իրանց կայքը և կեանքը: Սովից առաջ այդ գեղամունքը չէր նշմարվում. այդ միջոցին նրանք իրանց ընկճած գիւղերը խոնարհած անտարբեր նայում էին յաւերժակութիւններին և դրականներին, ինչպէս մի ամենօրեայ պատահարի վրա: Այժմ գիւղացին հասկացաւ, որ իր գոյութիւնը նշանակութիւն ունի, նա այնքան հոգին հաւատարմած չէ, նա բարձր է իր հարեան աղբերից, նա մի հզօր պաշտպան ունի, որ նրան կը փրկէ վատնից, ինչպէս որ փրկեց սովից. նորա աչքի առաջ մեռան իր դրացի քրդերը, տաճիկները, որոնք թաղաւորութիւնն ունէին: Այդ իրական դէպքով նա համոզվեց որ իր ազգը, թաղաւորական ազգիցն էլ հզօր է և դրանով ակնածելի դարձաւ դրացիների աչքում:

Եթէ այս փոքրիկ գործով, սովածներին տըրված օգնութեան համար եմ ասում, ազգը մեծ և ամբաւ արդիւնք ունեցաւ, մեռելական թմբուրութիւնից յետ կանչեց իր որդոց, յուսոյ հոգի տուց նրանց, իրաւունք ունեցան անտանձնաւ արդիւնք կը յառաջանար, եթէ գիւղացու երեակայաձի համեմատ, մի կազմակերպված մարմին լինէր, և այդ մարմինը տարին մի քանի անգամ իր անդամներին համար մտածելու նստէր:

Նա իմ աշխատութեան նպատակը՝ ես խնդրում եմ առանձին ուշադրութիւն դարձնել, ուսումնասիրել ամեն կողմից ազգայնութեան արմատ հանդիսացող գիւղացու կեանքը, ճանաչել նորան, ճանաչել նորա բնական աշխարհը, որին հայրենիք ենք ասում:

Եւ ամօթ է այն ազգի համար, որ ձգտում է քաղաքակրթութեան աստիճանների վրա բարձրանալ, չը գիտենալ թէ ինչ է ինք և ինչ է իրան պէտքը:

Կիւն—իր անձին աւելի հեղինակութիւն տալու նպատակով—այդ արդէն անհերքելի է: Մի քանի տեղից լսել եմ—ասում է Ն. Տ. Գ. օրինաւոր չափով համեմատութեամբ, որ (իմ) նամակը շատ համապատասխան է (?) հասարակութեան տրամադրութեանը, շատ երբ քաւաւ ան ան (sic) այն նամակով:—Այսպիսի մի ինքնագովութիւն լրագրութեան մէջ միշտ յանցանք ենք համարում: միթէ ժամանակ չէ որ վերանան այսպիսի համեմատութիւնները:

Մի երկու խօսք էլ Ն. Տ. Գ.-ի դատապարտելի բուրժուան մասին: Իմ նախկին նամակիս առաջնորդող միտքը այն էր, թէ Ն. Տ. Գ.-ի առաջին անգամ լրագրութեան ասպարէզ դուրս գալով—մի ո՛ր և է ազգա տիրացուն ազգեցութեամբ՝ իրեն նրա գործիք—կարճատեսութեամբ կամ անբարեխիղճօրէն է վարվել Մոսկովայի հայ հասարակութիւնը հետաքրքրող անցքերի ու խնդիրների հետ, հաղորդելով աննշան ու անպէտք լուրեր, շարելով զրպարտութիւններ արժանաւոր մարդկանց վրա և մի կողմ թողնելով աւելի կարեւոր և օգտաւէտ խնդիրները: Փոխանակ պատասխան տալու իմ խօսքերին, փոխանակ՝ ասում եմ՝ պաշտպանելու. իր անձը և իրան ոգնորող տիրապետիւն—Ն. Տ. Գ. խօսում է ինչ որ «հեռուական զգացմունքների» վրա, «կըրիտիկայի» վրա, «հասարակական կրթութեան» և «հասարակութեան (?) զգացմունքների» վրա, շարելով մէկ մէկու ետեւից այդպիսի ուսուցիկ խօսքեր և ինքն էլ չը հասկանալով, թէ ինչ է ուղում ասել:

Կարծեմ այս քաղաքական պարզկեցաւ Ն. Տ. Գ.-ի թեմէն հայեացքը առհասարակ թղթականութիւն գրելու վրա, այն մանր ու չնչին շարժառիթները, որոնք զրդէն են նրան լրագրութեան ասպարէզ դուրս գալու. էլ բառական է քննել նրա նամակը, որի ֆրաղները մի առ մի թուելու և քննադատելու ճանճրոյթ պիտի պատճառէ ընթերցողին, թէն գուցէ բոլորովին ապարդիւն չանցնէր նոյն իսկ Ն. Տ. Գ.-ի համար նա դեռ անփորձ է: Եւ իրար. ինչ անխնայ մու-

Այսպիսի գործի համար հարկաւոր է մասնագէտներ, խումբեր, բայց որովհետեւ դուք չը կան և ով գիտէ երբ կը լինեն, ես որքան որ կարողութիւն ունէի, նորա համեմատ աշխատեցի. յոյս ունեւ, որ ոչ ոք իրաւունք չի ունենայ իմ կարողութիւնից բարձրագոյնը ինձանից պահանջել:

1880 թւին դէպի վան արած ճանապարհորդութեանս միջոցին, աշխատեցի, որքան կարելի էր, ուսումնասիրել այդ նախնադը, և նորա արդիւնքն էր որ այսօր ես պատիւ ունեւ ձեզ ներկայացնել, չը նայած որ դա մի շատ պակասաւոր գործ է, բայց յոյս ունեւ որ դա յորդոր կը դառնայ կատարելապէս աշխատութեանց:

Վիճակագրական թւերը հանած եմ սովորեց յանձնաժողովի աշխարհագրից և հասանդի այն գաւառները, որ ես անձամբ չեմ կարողացել ա-

կանառեսնել լինել, վարդապ վանքի իմ նախկին դասընկերներս օգնութեան եմ դիմել:

Վասպուրականի անհանգ և իւր գաւառներ

1.

Նահանգական քաղաք Վան և Այգեւոտան:

Երեւակայեցէ մի գեղեցիկ տարածութիւն միջին հաւասար բաժանված կապրոյտ և կանաչ գոյներով: Այդ գոյները ծովի և ծառաստանների գոյներն են:

Նորան, ինչպէս մի նկարի, ձուռն չըջանաւ կում են, արեւելքից Վարդապ լեռը, որի աջ և ձախ մանր թերեր հանում են ծովին:

Այդ ըրբաների ետեւից դէպի հարաւ բարձրանում են Արտա լեռների, դէպ հիւսիս Բերկ լեռն և Արճիլի լեռներ, արեւմուտքից չըջապատում են ծովին Սեփան, Ներսիսի և Գրգուռ լեռները:

Շրովի և Այգեւոտանի մէջ կղզիացած մի քաւառ ժայռ կայ, ինչպէս մի կեղծոյնի միջակէտ, արեւելքից արեւմուտք ձգված, քարեայ սանդուղաներով ծածկված, որոնք մաշվել են և բեռնաւորներով զարդարած: Այդ պատմական հնութիւնը վանայ բերդն է, որ երեսունից աւելի ձեռաւոր քարայրեր ունի, փայտերի մէջ ծածկված հորեր, որոնք երկրի խորքն են իջնում և դեռ քննված չեն, թէ ինչի են ծառայել և ուր են գնում: Բերդը հնումը անուանի, այժմ պատեւրացմական ոչ մի նշանակութիւն չունի. նրան

թիւն Ն. Տ. Գ.-ի կողմից, ինչ տխուր և ցաւալի երեւոյթ մեր լրագրութեան մէջ—գրիչ առնել ձեռքը և առաջին նամակը, առաջին տողը, որ գրում ենք լրագրի մէջ՝ միտենք թուղթը ուրիշի անձնական հաշիւների համար՝ անպատճառ ամբաստանութիւններ կուտելով սրա—նրա գլխին, անպատճառ մեղադրական ակտեր կարգալով գործունեայ և վաստակաւոր մարդկանց վրա: Միթէ էլ բան չը կար գրելու. միթէ ամբողջ Մոսկովա քաղաքը իր համալսարանական չըջաններով, իր քաղաքական, անտեսական և ուսումնական կեանքի հարուստ պարագաներով չը կարողացաւ ամբողջ տարվայ մէջ արտադրել մի ո՛ր և է այլ խոտերիս Ն. Տ. Գ.-ի համար, որ նա՛ իր առաջին դէբելու չայ լրագրութեան մէջ սկսում է միայն օտարի անձնական հաշիւներով, արժանաւոր մարդկանց գովանի վաստակները ուրանալով և մի որ և է սոցէտ տիրացուի ձեռքը գործիք դառնալով... Պէտք է զգուշ լինել այդպիսի փնտսակար աղբեցութեանց—այդպիսի սոցէտ, բայց ճիշդութիւն տիրացուներից, որոնք վախենալով անձամբ հանդէս դուրս գալ կամ խօսել հրապարակօրէն՝ առանց խղճահարութեան որսում են անփորձ երիտասարդներ իրանց կրքերի, իրանց անձնական հաշիւների համար:

Գ. Թ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեղ գրում են որ այդ քաղաքում արգէն ինն հոգի հայ պարոններից ցանկութեան են յայտնել զրվել պ. Գիւլօրիէի լրագրին: Ինչպէս երևում է, եթէ Գիւլօրիէի թերթը կաշնդվի, նա 200-ից էլ շատ բաժանորդ կունենայ:

Կողբից, պ. Մարտիրոս Յովհաննիսեան թուամանցից ստացանք 2 բուրջ յօդուտ վանի կողմերի երկրաշարժից վնասվածներ:

տիրում են չըջակայ բուրձներ և Այգեւոտանի վերին մասը: Նա մի ուղեւորութեանց է, ունի երկու մեծ ամբարներ վառողով լիք, հին և նոր գէնքերի մի մեծ պահեստ:

Բերդի հարաւային երեսը մօտ 600 ֆուտ բարձրութեամբ սեպացած, պատի պէս կտրված է: Այդ գահավիթի տակն են շինած քաղաքի թաղերը նեղ և ծուռ փողոցներով: Հարաւից, արեւելքից և արեւմուտքից չըջապատած է քաղաքը քարուկիր կրկի պարիսպներով և խրամով:

Այստեղ են գետեղած կառավարութեան բոլոր պաշտօնատները: Այստեղ է հայոց սահմանադրական վարչութեան կեդրոնը, հայոց առաջնորդարանը, վաճառանոցը իր առեւտրականներով և արհեստաւորներով, որոնք աննշան բացառութեամբ բոլորն էլ հայեր են:

Այդ շրջանակի մէջ Այգեւոտանը մի այլ պատկեր է ներկայացնում. մօտ եօթ վերտո երկայնութեամբ և հինգ վերտո լայնութեամբ, արեւելքից դէպի արեւմուտք սփռվում են գեղեցիկ այգիներ, լայն և ծառազարդ փողոցներով, որի երկու կողմից զգլալով անցնում են աղբիւրի ջրեր: Գրքա բնական աղբիւրներ չեն: Այգեւոտանից իրանց այգիները ջրելու համար հորեր փորելով դուրս են բերել այդ ջրերը: Բոլոր Այգեւոտանը հողատիր է ջրվում:

Վանայ հնութիւնների մէջ ամենանշանաւորն է Աւսիւս-քար կամ Զմիւ-զմիւ-նաղապայ, թիւրքերէն Թօփուքալէ: Սա նոյնպէս մի շատ հին բերդ է, որի համար պատմութեան մէջ ոչ մի ծանոթութիւն չը կայ: Թեւեւ վանիցոյ աւանդութեամբ պատմած Պղնձէ քաղաքը լինի: Պատերի մէջ մնացած գերանների ծալքերի ածուխը և ուրիշ այլոված առարկաները ցոյց են տալիս, որ մի լափով կրակ վերջ է տուել նորա կենդանութեան:

Անդդիացի հնագէտ պ. Սթոուն այս քարաժայռի վրա դիզած հողաբուրք փորել տալով իջաւ մի շինութեան հիմքերի վրա, որը կռատուն է կարծվում: Գա մի հիմնալի շինութեան հետք է, մաքուր տաշած կապրոյտ քարերի մի քանի կարգ առանց ձեփի շարված: Փորվածքի արդիւնքներն եղել էին մի քարեայ առաջան, այրված, փտած պղնձի վաճանների կտորներ, որոց վրա դեռ երևում են նկարներ, եզան գլուխներ արոյրից ձուռած, մի փղոսկրեայ կիսարձան և այլ պղնձի ամանեղէնների կտորներ, յատակի

Պ. Աւետիս Զարգարեանց ազգայնացի, որ թիֆլիսում է բնակվում, հասցրեց մեր խմբագրութեանը 3 բուլլ յօդուտ վանի երկրաշարժից փնտրածները և 3 բուլլ յօդուտ «Միացեալ ընկերութեան»։

Ներկայ համարից սկսում ենք տպագրել պ. թոմասիանի դասախօսութիւնը «Թիւրքաց Լա-յաւառի մասին», որ «Մշակի» մէջ տպագրվելուց յետոյ կը հրատարակվի առանձին գրքովով, որ ինչպէս իմացանք, խոստացել է իր ծախսով հրատարակել պ. Ալեքսանդր Թոմասիան Մէլիք-Լալայեանից։

«Մշակի» վեց ամսվայ բաժանորդագրութիւնը արդէն սկսված է։ Բոլորիս 1-ից ներկայ թիւի մինչև յունվարի 1-ը 1882 թիւ մեր լրագրի գինը 6 բուլլ է։ Օտարաքաղաքացիք պէտք է ուղղակի գրեմն խմբագրութեանը։

Այսօր, յունիսի 1-ին պ. Սուքիասեան տալու է Արթուրեան թատրոնում մի կոնցերտ-ներկայացում, մասնակցութեամբ վրացի գերատանների և հայ սիրողների։ Յոյս ունենք որ հասարակութիւնը իր ներկայութեամբ կը յարգէ պ. Սուքիասեանի կոնցերտը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

Բոլոր լրագրիւնները հաստատում են Վրաց-ստոնի պարլամենտում ասած համակրական խօսքերը հայոց խնդրի վերաբերութեամբ։ Մի և նոյն ժամանակ լրագրիւնները հաղորդում են որ անգլիական նոր գեսպան Վ. Պօլի մէջ, լորդ Կըմբլըն, թիւրքաց մայրաքաղաքը հասնելուն պէս Սուլթանի մօտ

մոզայիքական մասեր, որոնց լուսանկարը և մի քանի տեսակներ հետո եմ բերել։

Բայց տեղացիք անգլիացի հնազանդաց աւելի նշանաւոր առարկաներ են գտել, ինչպէս արդի ոսկեջրած արձաններ, արդի ոսկեջրած ծաղկեայ բազմաթիւ մասեր, ոսկեղէն, արծաթեղէն զանազան զարդեր, երկաթեղէն և այլն։ Յաւանքով այն է, որ այդ գտնված բազմաթիւ առարկաները գտնվածների տղիտութեանց կամ կառավարութեան երկրորդ ոչնչացրել, անհետացրել են։ 1856-ին մի փոռ գտնվել մէջը լիք մօտ 500 հատ զանազան մեծութեամբ պատ-րաստ փաղեր, այդ ամանեղէնները մոլոր նարնջի գոյն ունեն դրսից հնարակած, յղկած։ Վարագայ վանքում ձեռք բերած հնութիւնների մէջ նշանաւոր է երկու գլխաւոր կրտսերները, որ շատ նուրբ ձաշակով է ձուլված և ծածկած է գրեթէ թղթի հաստութեամբ ոսկեջրով։ Այնպէս տարիներում մի մշակ, այդ աւերակներից շինութեան քարեր հանելիս, գտնում է մի ձուլված բազմաթիւ ծածկված բեռնագրերով, նա թաղկաթում ծախում է մի քաղաքացու, որը դարձնել է տալիս իր սայլի անիւների համար գործածելու։

Ամենաշարժալի մասերը այդ լեռան քարայրներն են, դոքա այնպէս կոխ փորված են, որ կռանի մուրճի հետք բոլորովին չէ տեսնվում, կարծես թէ քանդակ պանրի հետ է դրած ունեցել և հետո-թեամբ ուղած ձեւ է տուել։ Այդից ամենա-մեծը Զըմի-գըմի-նաղաբայ է կոչվում, որի մուտքը սկսվում է արեւելեան կողմից ժայռի մէջ բացված մի դռնից, որ տաս ֆուտ լայնութիւն և տասնութ ֆուտ բարձրութիւն ունի։ Անցքը իջնում է հարկեր տալած սանդուղներից, որոնք դռան լայնութիւնն ունեն և լուսաւորված են երկու լուսամուտներիով։ Վերջին աստիճանի ձախ կողմը բացվում է մի քառակուսի այլ 46 ֆուտ մեծութեամբ, խորութիւնը քարերով և տղմով լցուած լինելով, բարձրութեան չափը անորոշ կը մնայ։ Առաստաղը զարդարած է գերանների և մարդակների ձև քանդակներով։

Ամենահետաքրքրական է դեռ անձանիթ այս քարայրի միջից դէպի ստորերկրայ տանող անցքն է։ Այսպէս մի անցք էլ լեռան գագաթին կայ, որ նոյնպէս դէպի լեռան խորքն է գնում։ Այս վերջինը բնակիչներից Զարիս-Ֆէլէկի ծակ է կոչվում։ Վանքից շատ առասպելներ են պատմում դոքա համար, իբրեւ թէ այդ ծակերը առաջ-

տեսակցութեան արժանացաւ։ Կըմբլըն խօսելով սուլթանի հետ յոյս յայտնեց որ թիւրքաց կառավարութեան հոգացողութեան գլխաւոր առարկայ լինելու են երկու խնդիրներ՝ հայոց խնդիրը և թիւրքայի ֆինանսական խնդիրը։

Բայց Կ. Պօլի «Վազըթ» թիւրքաց լրագրիւնը հաստատում է թէ Կըմբլըն հայոց խնդրի վերաբերութեամբ համաձայն չէ իր նախորդի, Կօշէնի մտքերի հետ, իսկ այն ըստ էյից յետոյ, երբ իշխան Բիւսմարկ ստանութեամբ ընդունեց Կօշէնի դէպի գերմանական կառավարութիւնն ուղղած հրահրը աջակցել Անգլիային հայոց խնդ-րի լուծման վերաբերութեամբ, Կըմբլըն իր կառավարութեանց իբր թէ հակահրահանգ է ստացել, այսինքն հրաման է ստացել չը շտապել հայոց խնդրի լուծման վերաբերութեամբ, այլ սպասել պատեհ ըստ պէի։

Որքան ստոյգ է «Վազըթ» լրագրի տեղեկութիւնը, մեզ դժուար է ասել, միայն մենք մեզ թոյլ կը տանք փոքր ինչ կասկածելու այդ տեղեկութեան ճիշդ լինելը, նախ որ Անգլիան մեծ պէտք չունի Գերմանիայի օգնութեան արեւելեան խնդրի լուծման վերաբերութեամբ, երկրորդ՝ Վազըթի արտասանած եռուդոտ և հաստատումիւ խօսքերը պարլամենտի մէջ այն ժամանակ յայտնվեցան, երբ Գերմանիայի, կամ աւելի լաւ է ասել Բիւսմարկի մերժումը արդէն յայտնի էր Անգլիային և ամբողջ Եւրոպային։

Նորոգում են մինչև Գայլ գետի ամբար, որ հոսում է սարի ստորերկրայքում։ Նորա եղբերին Բաղդէ պտտացնում է աշխարհի անիւը կանգնած ոսկի և արծաթի կոյտերի և անգլիա-կոնցերների մէջ։ Նորան մօտեցող մասկանացուն խելոյն կը մեռնի։ Միայն Լամբարձման շիշերի կէտին, երբ երկինքն ու գետինը իրար են խառնվում, ինչպէս Միսիլի գոռը, նոյնպէս և Զարիս-Ֆէլէկի մուտքը բացվում է ամենի համար և ուր ժամանակին մտնում է, ստանում է Բաղդէ իր ցանկացած բաժինը։

Այդ ստորերկրայ անցքերի մուտքը կառավարութեան հրամանով փակված է, որովհետև հետաքրքրելիք և յանկարծ հարստանալ ցանկացողները չտանք մտնում էին այդ ծակերում և այլ ևս չէին վերադառնում։

Մի ծերունի ինձ մի շատ հետաքրքրական ճանապարհորդութիւն պատմեց Զարիս-Ֆէլէկի անցքի մասին։ Կամ երկտասարդութեան ժամանակ, ասաց նա, ես մի ընկերոջ հետ վեր առաւրդ մի լապտեր և սոսիակ յարդ և սկսեցինք իրարեւտելի ներքի խնդել։ Մի քառորդ խնդելից զինք մեր ճանապարհը հորիզոնական դիւր ստացաւ։ Մի քանի անգամ ալ և ձախ չըջեցինք, այնուհետեւ չը գիտէինք թէ երկրի որ կողմն ենք գտնվում։ Վերջին պոռոյը մեզ հանեց ճանապարհի կողմին և միջինը և ընտրեցինք աջակողմնեւ և այդտեղ մի քիչ յարդ ածեցինք նշանի համար։ Օղը խոսաւ էր և ծանր քսան քայլափոխից ըզինք դարձաւ մեր ճանապարհը բաժանվեց այս և նիւր քայլ անցել էինք, յանկարծ մեր ճանապարհը լայնացաւ, մենք մտանք մի հիւսնակ քարեայ կամարի տակ։ Մեր ալ կողմ կարգաւ քարափոր սենեակներ էին շինած և ամեն մի սենեակի դռան մի քարէ արձու դրած։ Այսպիսի սենեակներ հետ մեր ճանապարհը փակեց մի մեծ և գեղեցիկ քարեայ դռան, որի վրա մի շուկ տեսակ քանդակներ կային։ Շատ աշխատեցինք այդ դռան բաց անել, բայց անկարելի եղաւ, մանաւանդ յիշելով որ դա Զարիս-Ֆէլէկի դռան պէտք է լինի, որից մահկանացուն անպատու-հատ ներս չի մտնի, յետ դարձանք։

ԳԵՐՄԱՆԻԱ

Իշխան Բիւսմարկի որդին նորերում մի ձառ է խօսել պահպանողականների ժողովում առաջադիմականների դէմ, կծու և վիրաւորական խօսքեր գործածելով Վասէլ-Երիկ Բիւսմարկի դէմ, նոյնպէս Բիւսմարկի դէմ։ Բոլոր ազատամիտ գերմանական լրագրիւնները ծաղրում են այդ ձառը, ասելով որ կոմ Բիւսմարկ, որ ինքն ոչինչով յայտնի չէ, բացի նրանով որ իր հօր ազգանունն է կրում, պէտք է աւելի յարգանքով վերաբերվէր դէպի այն մարդիկ, որոնք արդէն նշանաւոր էին մինչև որ կոմ Բիւսմարկ դեռ գիմնադիւտ էր։ Ազատամիտ կուսակցութեան առաջնորդ Բիւսմարկ քիչ օրից յետոյ ազատամիտների ժողովում կոմ Բիւսմարկին հակառակ մի ձառ ասեց, ծաղրելով նրա ասածները, իսկ Բիւսմարկ քաղաքային վարչութիւնը դիտաւորութիւն ունի երկտասարդ կոմին դատի կանչելու, վարչութեան դէմ նրա արտասանած վիրաւորական խօսքերի համար։

ԻՏԱԼԻԱ

Պարլամենտական մեծամասնութեան անդամների ժողովի մէջ Գեպրետիս պիլոն էր, որ պատգամաւորների ժողովի արձակուրդներից առաջ քուէարկվի ընտրողական օրէնքը ցուցակներով ընտրութեան ձևի հարցի հետ կից։

Սօվիետների մօտ եղած պատերազմի տարեգրքի առիթով «Popolo Romano»

Ներուհու պատմութիւնը ստուգութիւնից դուրի չէ, որովհետև աւանդութեամբ կը պատմեն վանքից, որ այդ անցքերը վանայ բերդի հետ հաղորդակցութիւն ունեն գետնի տակից, աւելացնելով և խորհարար նկարագրած հրաշալի ստորերկրայ պարանքները, որոնք Շամիրամ շինել է տուել, էլ տարակուսի տեղիք չի մնար։ Բայց այդ նորերում այդ քարափայտի դառնվայրում բացվեց մի այլ ստորերկրայ ճանապարհ, սաղաքաբերով ծածկած, որ դէպի ծորն է խնդում։ Տարակուս չը կայ, որ դա պատարաստված է պաշարման ժամանակ, պահեստի ջրի պաշար հայթայթելու համար։ Այդ ճանապարհը ծորից բարձրանում հասնում է մինչև մեր յիշած ժայռի ստորոտը և ընդհատվում է նրա շարունակութիւնը։ Ինչպէս երևում է, դա ճարտարագետը բերդի ստորերկրայքը թշնամիներին չը մատու-լու համար, մի գաղտնիք է ստեղծել և դա համար էլ մի գաղտնիք բախնիք փորագրել է նոյն ժայռի վրա, այսինքն այնտեղ ուր կտրվում է նկուղի շարունակութիւնը, զրոյց ժայռի վրա մի թիղ լայնութեամբ և երեք թիղ երկայնու-թեամբ ութ հատ խոր փորված նշաններ կան, որոնք իրարից երկու արշին հեռավորութիւն ունեն։ Բերդի կառավարչին ի հարկէ յայտնի կը լինէր թէ ստորերկրայ մուտքը ըր նշանի տակն է, որպէս զի պէտք եղած միջոցին դժուարութեան մէջ չընկնէ։ Այսպիսի անգլիացի հնագէտը այս բոլոր ասածներն վրա, ստորերկրայ ներքի մասին, տեղեկութիւն չունենալով, հոգա-րութիւնը է միայն փորել տալիս։ Թերեւս այդ հնութիւնները, որոնցից հին պատմութեան համար մեծ գիտ կարելի է սպասել, կը մնան հայոց հնագիտական ընկերութեան համար, որ տարա-կուս չը կայ, պիտի կազմվի մի օր։

Այս արեւելից արեւմուտը ձգված ժայռի վերջին ծայրում (արեւմտեան կողմից) գտնվում է Վանայ ամենամեծ բեռնազորական արձանագրու-թիւնը, որին տեղացիք Միսիլի գոռն են անուա-նում։ Իսկ որ դա մի ահագին դռան նմանութիւն ունի։ Նկատել պէտք է որ բոլոր ժայռերի վրա եղած բեռնազորները ժամանակի դէմ ապահովաց-նելու համար տալած, խորացրած է ժայռի մա-կերեցիքը, կարծես մի հաստ քանակիւնի չըը-ջանակի մէջ լինի դրած։

Վանքից առասպելը այդ դռանն արձանագ-րութեան ետեւ, իր ձևու հետ շղթայակապ դա-

լրագրիւն նկատում է, որ այդ պատերազմը իտալիայի ազատութեան մեծ գործի սկիզբն էր, որի համար Փրանսիական արիւնը թափ-վեցաւ իտալականի հետ միասին։ Այդ պիտի յիշատակը չէ կարող ջնջվել ոչ Տու-նիսի դործերի և ոչ վերջին տիուր անցքե-րի պատճառով։ Իտալական և Փրանսիա-կան մեծ ազգութիւնները պէտք է մշտա-պէս միմեանց դաշնակիցներ լինեն։

Պալերմօի մէջ իտալական երիտասարդ-թիւնը փորձեց անկարգութիւններ գործել, բայց պոլիցիան խանգարեց նրան իր գոր-ծադրած եռանդոտ միջոցներով։ Զօրքերը ցրվեցին ամբոխին և մի քանի մարդ կալա-նաւորեցին։

Միլանի մէջ պրեֆեկտի տան առաջ նոյն պէս մի ցոյց կատարվեցաւ, որի ժամանակ ամբոխը կանչում էր «Կեցցէ թագաւորը, կեցցեն իտալական զօրքերը»։ Պրեֆեկտը դուրս եկաւ տանից և ասաց ժողովրդին, թէ ինքը կատարելապէս գնահատում է նրանց ոգևորող զգացմունքները, բայց խոր-հուրդ է տալիս հանգիստ մնալ և կարգա-պահութիւնը չը խանգարել։ «Կառավարու-թիւնը կարող է պաշտպանել ազգային պա-տիւրը, նկատեց նա, մեր թագաւորի վեհ-անձն բնաւորութիւնը մի գրաւական է, որ նա կը ստիպի յարգել իտալիան»։ Պրեֆեկ-տի ձառը ծափահարութիւններով ծածկվե-ցաւ և ամբոխը հեռացաւ առանց որ և է անկարգութիւն անելու։

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Բաւական եմ համարում այսքանը վանայ հնութիւնների վրա խօսել, այդ աշխարհը այն-քան հարուստ է դոցանով, որ տարակուս է յա-րուցանում այժմեան Վանք, արդեօք հին պատ-մական վան համարել։ Խորհնացու նկարագրած Շամիրամիկերը նոյնպէս բոլորովին նմանու-թիւն չունի։

Վանայ ծովը 4 կղիներ ունի, որոնցից երեքը վանքեր են հայ ազգի փրկութեան համար աղօ-թող աղեղանելով լցրած։ Մի ժամանակ, այդ կոնաւորները վանքից վրա ձախորդ ազգեցու-թիւն ունէին իրանց աշխարհի ունայնութեան վրա տուած խիստ քարոզներով, այնպէս որ, դոցա քարոզների ազգեցութեան տակ երիտասար-դները ընտանեաց ծոցից փախչում էին վանքեր, մարդիկ ինչպէս կրօնաւորներ բերան գիտէին բոլոր սաղմունն ու Պարկի և Ալգետանից քաղաք իրանց գործին գնալիս մարդ կարծես պատահում էր խուրդ խուրդ ազգաների, որոնք իրանք ի-րանց փախում, այսինքն սաղմուն էին կարգում։ Նոքա կամաւ իրանց անձը, ստոյկեանց պէս, ենթարկում էին թիւրքերի ծեծին և նախատին-քին։ Այդ ժամանակի վանքիները երկրային թա-ղաւորութեան մտքերին թշնամի էին։ Այդ մո-լեռանդ պրօպագանդիստներին մահացու հար-ված տուեց խրիմեան իր աշակերտներով, որոնք ազգութիւն քարոզեցին։ Այժմ դոքա այլ ևս չեն համարձակվում քարոզել, նրանց ժամանակն անցկացաւ, նրանց այլ ևս խոդներ չը կան։

(Կը շարունակուի)

